ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԼՕ-2021/01, 12.01.2021թ.

Բողոք բերող անձ՝ «Լեմուր» ՍՊԸ

Պատվիրատու՝ Չարենցավանի համայնքապետարան

Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ «ՉՀ-ԳՀԾՁԲ-2021/4» գնանշման հարցում

Գնման առարկան միջոցառումների կազմակերպման ծառայությունների ձեռքբերում

Բողոքի պահանջը՝ պարտավորեցնել չեղյալ հայտարարել Չարենցավանի համայնքապետարանի կողմից հայտարարված «ՉՀ-ԳՀԾՁԲ-2021/4» ծածկագրով մրցույթի շրջանակներում անցկացրած բանակցությունները և «ՉՀ-ԳՀԾՁԲ-2021/4» ծածկագրով ընթացակարգը հայտարարել չկայացած:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ռ. ՄԿՐՏՉՅԱՆ

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին

ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

«ԼԵՄՈՒՐ» ՍՊԸ
Հասցեն՝ Ք. Երևան, Ա. Տիգրանյան 5/12 բն. 20
Սպասարկող բանկի անվանումը, «Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570023844910300
ՀՎՀՀ 00899289
llclemur@gmail.com
Հեռ. +374 98 04 29 13

ՄՄՍ N Ս-614-21
5 «12» 01 2021թ.

ՀՀ ֆինանսների նախարարության
Բողոքարկման խորհուրդ

ԴԻՄՈՒՄ – ԲՈՂՈՔ

Բողոքը ներկայացրած անձի անվանումը՝ «ԼԵՄՈՒՐ» ՍՊԸ , տնօրեն Ռաիսա Վարդանովա

Բողոքը ներկայացրած անձի հասցե՝ Ք. Երևան, Ա. Տիգրանյան 5/12 բն. 20

Պատվիրատուի անվանումը և հասցեն՝ Չարենցավանի համայնքապետարան, ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ թիվ 1

Բողոքարկվող գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«*ՀՀ-ԳՀԾՁԲ-2021/4*», միջոցառումների կազմակերպման ծառայություններ

Վեճի առարկան ՝

Չարենցավանի համայնքապետարանի կողմից հայտարարված «*ՀՀ-ԳՀԾՁԲ-2021/4*» ծածկագրով մրցույթի շրջանակներում 2020թ. Դեկտեմբերի 25-ին էլեկտրոնային ձևով ծանուցվել է բավարար հայտեր ներկայացրած մասնակիցներին՝ գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի, վայրի և անցկացման կարգի մասին ՝ առաջարկելով ցանկության դեպքում ներկայանալ Չարենցավանի Համայնքապետարան, կամ մինչև սահմանված ժամկետի ավարտը, որը սահմանվել էր դեկտեմբերի 29-ը ժամի 12:00, նոր գնային առաջարկը էլեկտրոնային ձևով ուղարկվել gaxgnumner@mail.ru էլեկտրոնային փոսթի հասցեին : «ԼԵՄՈՒՐ» ՍՊԸ-ի կողմից նոր գնային առաջարկն ուղղարկվել էր վերոհիշյալ էլեկտրոնային փոստի հասցեին 29.12.2020թ.-ին, ժամը 11:11–ին՝ 4 200 000 ՀՀ դրամի չափով, որից հետո ժամը 11:15-ին պատվիրատուի կողմից ստացել ենք ծանուցում այն մասին, որ բանակցությունները տևելու են մինչև ժամը 12:30-ը: Այնուհետև, ժամը 12:28–ին, մեր էլեկտրանային փոստի հասցեին ստացել ենք նամակ հետևյալ բովանդակությամբ. «ԻՎԵՆԹ ՍԻԹԻ» ՍՊԸ-ն ֆիզիկապես մասնակցում է բանակցություններին և առաջարկել է 4,190,000 ՀՀ դրամ:

Հիշացնենք, որ ի սկզբանե պատվիրատուի կողմից բանակցությունների համար վերջնաժամկետ էր սահմանված դեկտեմբերի 29-ը, ժամը 12:00-ն և «ԻՎԵՆԹ ՍԻԹԻ» ՍՊԸ-ի կողմից ժամը 12:28 –ին առաջարկված գնառաջարկը արդեն իսկ ուշացած էր և չէր կարող ընդունելի լինել պատվիրատու կողմից:

Ի պատասխան տվյալ նամակի «ԼԵՄՈՒՐ» ՍՊԸ-ի կողմից ժամը 12:32–ին առաջարկվել է նոր իջեցված գնառաջարկ ՝ 4,150,000 ՀՀ դրամի չափով, որը ևս ընդունվել էր պատվիրատուի կողմից, չնայած, որ փոփոխված բանակցությունների վերջնաժամկետն սահմանված էր ժամի 12:30ը: Ի պատասխան, ժամը 12:37-ին ստացել ենք նամակ, որի մեջ նշված էր, որ «ԻՎԵՆԹ ՍԻԹԻ» ՍՊԸ-ն

ֆիզիկապես մասնակցում է բանակցություններին և առաջարկել է 4,100,000 ՀՀ դրամ : «ԼԵՄՈՒՐ» ՍՊԸ-ի կողմից ժամը 12:40–ին առաջարկվել է նոր իջեցված գին՝ 4,000,000 ՀՀ դրամի չափով: Այնուհետև, ժամը 12:54-ին, պատվիրատուի կողմից ստացել ենք նամակ, որի մեջ նշված էր, որ բանակցությունները տևելու են մինչև ժամը 13:00-ն: Ժամը 12:58 նոր նամակ ենք ստացել պատվիրատուի կողմից, որը վերաուղղարկված էր hs.partners@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեից՝ պատվիրատուի պաշտոնական qaxgnumner@mail.ru էլեկտրոնային փոսթի հասցեին, մրցույթի հետ որևէ կապ չունեցող «ԷՅՉ ԷՍ ՓԱՐԹՆԵՐՍ» ՍՊԸ–ի կողմից և կցված էր «ԻՎԵՆԹ ՍԻԹԻ» ՍՊԸ-ի կողմից առաջարկող նոր գնառաջարկը՝ 3,900,000 ՀՀ դրամի չափով: Մի քանի վարկյան անց՝ 12:59 ստացել ենք ծանուցում պատվիրատուի կողմից այն մասին, որ բանակցությունները ավարտված են, չնայած այն փաստին, որ 2-րդ անգամ փոփոխված վերջնաժամկետն է սահմանվել ժամը 13:00-ն, այսպիսով ֆիզիկապես ժամանակ չթողնելով «ԼԵՄՈՒՐ» ՍՊԸ-ին գնառաջարկ կատարելու համար: «ԼԵՄՈՒՐ» ՍՊԸ-ի կողմից նոր գնառաջարկ է կատարվել ժամը 13:02-ին, սակայն այն արդեն չի ընդունվել պատվիրատուի կողմից, չնայած, որ ժամը 12:32 ի ուղղարկված գնառաջարկը, նմանապես՝ 2 րոպե ուշացումով, ընդունվել էր:

Բողոքի փաստացի և իրավական հիմքերը՝

Վերոգրյալից պարզ է դառնում, որ պատվիրատուի կողմից բանակցությունների անցկացման կարգը չի պահպանվել և խախտվել են մի շարք մրցակցային դրույթներ: ՀՀ <<Գնումների մասին>> օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ կետի 1-ին մասի համաձայն. 1) նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների հետ կապված բողոքներ քննող անձին.

Բողոքի ապացույցները՝ սույն դիմումին կից փաթեթով

Բողոքի պահանջը՝

Ձեռյալ հայտարարել Չարենցավանի համայնքապետարանի կողմից հայտարարված «*ՉՀ-ԳՀԾՁԲ-2021/4*» ծածկագրով մրցույթի շրջանակներում անցկացրած բանակցությունները և «*ՉՀ-ԳՀԾՁԲ-2021/4*» ծածկագրով ընթացակարգը հայտարարել չկայացած:

Առդիր՝ մեկ փաթեթ

Դիմող՝

«ԼԵՄՈՒՐ» ՍՊԸ տնօրեն **Ռ. Վարդանովա**

12.01.2020թ.